ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...

Առաջադրանքներ

1. Բառաշարքից ընտրիր հապավումները:

Գիտություն, գիտաշխատող, գիտակցություն, գիտքարտուղար, գիտխորհուրդ, գիտնական, գիտարշավ, գիտբաժին, գիտելիք, գիտաստիճան, գիտարդյունք:

2. Հետևյալ կապակցություններից հապավումներ կազմիր:

Աշխատանքի ղեկավար, զինվորական կոմիսար, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, արհմիութենական կոմիտե, լրատվական միջոց, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, պետական համարանիշ, էլեկտրական ցանց, էլեկտրոնային փոստ:

3. Տրված բաղադրիչներին ավելացրու բառ և 1-ական հապավում կազմիր:

Բնակ(բնակարանային)	բուժ(բուժական)
զին(զինվորական)	քիմ(քիմիական)
պետ (պետական)	վիճ(վիճակագրական)
մարզ(մարզային)	էլ(էլեկտրոնային)
քաղ(քաղաքացիական)	ֆիզ(ֆիզիկական)

Նմուշ՝ բնակ (բնակարանային) – բնակվարձ:

4. Վերականգնիր *էլփոստ* և *էլցանց* հապավումների կրճատված բաղադրիչները և բացատրիր կազմությունը: Կազմիր նախադասություններ: